



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«19» հոկտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-75/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.02.2016թ. թիվ 1/73-3/5818-16 և 24.02.2016թ. թիվ 1/73-1/6745-16 գրություններով ներկայացված «Սասունասար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Զրվեժի գյուղապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 27.07.2015թ. թիվ 01/03.2/276-15, 08.02.2016թ. թիվ 01/03.2/52-16, 17.02.2016թ. թիվ 01/03.2/74-16, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝

Պատվիրատու 2) 12.02.2016թ. թիվ 01/61-2103 գրությունների հիման վրա, 18.02.2016թ. թիվ 1/73-3/5818-16 և 24.02.2016թ. թիվ 1/73-1/6745-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 22.02.2016թ. թիվ 01/04.2/588-16 և 26.02.2016թ. թիվ 01/04.1/692-16 գրություններով դիմել է «Սասունասար» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 22.02.2016թ. թիվ 01/04.2/588-16 գրության՝ «Սասունասար» ՍՊԸ-ն 01.03.2016թ. ՍԱ-ՋԿ/01 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հանդիսանում է պարտաճանաչ ու բարեխիղճ հարկատու և միշտ ժամանակին ու գերավճարով է կատարել իր հարկային պարտավորությունները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ընկերությունը հայտնել նաև, որ Ջրվեժի գյուղապետարանի «ԿՄՋԳ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով գնման ընթացակարգի ժամանակ, հանգամանքների բերումով, Ընկերության տնօրենը գտնվում էր Վրաստանի հանրապետությունում և հնարավոր չի եղել առանց Ընկերության տնօրենի ստորագրության իրականացնել հարկային պարտավորությունները, իսկ Ընկերության աշխատակիցը թյուրիմացաբար 23.06.2015թ. ընթացակարգի հայտ է ներկայացրել Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին:

Ընթացակարգը տեղի է ունեցել 23.06.2015թ., իսկ Ընկերության տնօրենը ՀՀ վերադարձել է 24.06.2015թ. և կատարել վճարումներն ամբողջությամբ: Այդ իսկ պատճառով առաջացել են առկա հետևանքները:

Ի պատասխան Կենտրոնի 26.02.2016թ. թիվ 01/04.1/692-16 գրության՝ Ընկերությունը 18.03.2016թ. թիվ ՍԱ-ԳԿ/0 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՊԸԾՁԲ-16/18» ծածկագրով

ընթացակարգի մասնակցության հայտի 3.1 հավելվածով Ընկերությունը ներկայացրել է համապատասխան հայտարարություն (թեկուզ և այդ աշխատանքների նախահաշիվներում նշված են որոշ չափի ծառահատման, ծառաէտման և ծառերի վերատնկման աշխատանքներ, որոնք իրականացվել են Ընկերության կողմից), նկատի ունենալով, որ առաջին անգամ այդպիսի գնման ընթացակարգի համար ոչ մի շինարարական կազմակերպություն հայտը ներկայացնելու տարվա և դրան հաջորդող երեք տարիների ընթացքում չունի պատշաճ ձևով իրականացված ծառերի էտի ծառայություններ, բացի «Նաիրիշին» ԲԲԸ-ից, որին 2015թ. առաջին անգամ (տվյալ դեպքում ևս) շնորհվել է ծառերի էտման մրցույթը (մինչ այդ, այդ ծառայությունները մատուցում էին Երևան քաղաքի վարչական շրջանների կանաչապատման բաժինները), որը նույնպես 2015թ. չունեի պատշաճ ձևով իրականացված ծառերի էտման ծառայություններ:

Նկատի ունենալով վերը նշվածը՝ Ընկերությունը ենթադրել է, որ նման պայմաններում նույնպես հնարավոր է մասնակցել գնման ընթացակարգին և ճանաչվել հաղթող:

Ինչ վերաբերում է Պատվիրատու 2-ի կողմից ուղարկված ծանուցմանը՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, ապա Ընկերությունը նշել է, որ նման ծանուցում չի ստացել:

Ընթացակարգի բացման օրվանից մեկ շաբաթ անց, Ընկերության տնօրենը գտնվելով Երևանի քաղաքապետարանի մասնաշենքում և հանդիպելով ընթացակարգի համակարգողին, հարցրել է ընթացակարգի արդյունքների մասին, որին ի պատասխան համակարգողը հայտնել է, որ էլեկտրոնային ծանուցումը ուղարկել է Ընկերությանը նույն օրը, հայտում առկա անհամապատասխանությունները վերացնելու համար: Իսկ քանի որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացվել, ուստի Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել է այլ ընկերություն:

Ընկերությունը գտնում է, որ իր կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

«Սասունասար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 17.10.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՅ-ԳԲԽ-75/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղապետարանը 27.07.2015թ. թիվ 01/03.2/276-15, 08.02.2016թ. թիվ 01/03.2/52-16, 17.02.2016թ. թիվ 01/03.2/74-16 գրություններով ներկայացրել է «ԿՄՋԳ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Ջրվեժի գյուղապետարանը 27.07.2015թ. թիվ 01/03.2/276-15 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգ 1-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով 17.10.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-77/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է ներկացացուցչի մասնակցությունը, ով պնդել է ներկայացված դիրքորոշումը:

4. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 12.02.2016թ. թիվ 01/61-2103 գրությամբ ներկայացրել է «ԵԲ-ՊԸԾՁԲ-16/18» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատու 2-ը հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՊԸԾՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ Ընկերությունը հայտի թիվ 3.1 հավելվածով պետք է ներկայացնեի հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է ծառերի էտի ծառայություններ, սակայն Ընկերության կողմից ներկայացվել է բակային տարածքների բարեկարգման, հուշարձանային համալիրի կառուցապատման և այլ աշխատանքների կատարման մասին հայտարարություն:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ իրականացված գնահատման արդյունքում, Ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություն:

Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Ղեկավարվելով Կարգի 46-րդ դրույթներով, Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով 17.10.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-75/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՑ-ԳԲԽ-75/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 18.02.2016թ. թիվ 1/73-3/5818-16 և 24.02.2016թ. թիվ 1/73-1/6745-16 գրություններով ներկայացված «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղապետարանի կողմից կազմակերպված «ԿՄՋԳ-ՊԸԱՇՁԲ-15/» ծածկագրով պարզեցված ընթացակարգ.

• ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղապետարանի կողմից Ջրվեժի գյուղապետարանի կարիքների համար կազմակերպված «ԿՄՋԳ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սասունասար» ՍՊԸ-ն **23.06.2015թ.** հայտ է ներկայացրել:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

- Պատվիրատու 1-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 24.06.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Սասունասար» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 04.07.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սասունասար» ՍՊԸ-ն **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 225 414 ՀՀ դրամի չափով:**

- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 22.07.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությամբ որոշել է «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժել:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՊԸԾՁԲ-16/18» ծածկագրով պարզեցված ընթացակարգ.

- Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ՊԸԾՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սասունասար» ՍՊԸ-ն 26.01.2016թ. հայտ է ներկայացրել:

- Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ մասնակիցը հայտնում է, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների

ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

Ընդ որում՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ **ծառերի էպի ծառայությունների մատուցումը:**

- Ընկերությունը հայտի N 3.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռուբինանց 1/1 և Դրոյի 4 շենքերի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների ցանկապատման, թիվ 149 մանկապարտեզի ընթացիկ նորոգման և հենապատերի սվաղման, ներկման աշխատանքներ, Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի 1-ին զանգվածի Գայի պողոտային հարող այգու տարածքում հուշարձանային համալիրի կառուցապատում, որի ընդհանուր արժեքը կազմել է 20 391 455.0 ՀՀ դրամ և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացրել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 26.01.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետով արձանագրել է անհամապատասխանություն «Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի և հրավերի պահանջների նկատմամբ, նշելով, որ մասնակիցը հայտի հավելված 3.1-ով պետք է ներկայացներ հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է ծառերի էպի ծառայություններ, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է բակային տարածքների բարեկարգման, հուշարձանային համալիրի կառուցապատման և այլ աշխատանքների կատարման մասին հայտարարություն:

- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, 26.01.2016թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրության 1.4 կետով մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով Ընկերությանը շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ 26.01.2016թ. տեղեկացրել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունը:

- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 01.02.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետով մերժել է «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը:

6. ՍՑ-ԳԲԽ-75/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Ջրվեժի գյուղապետարանի 27.07.2015թ. թիվ 01/03.2/276-15, 08.02.2016թ. թիվ 01/03.2/52-16, 17.02.2016թ. թիվ 01/03.2/74-16, Երևանի քաղաքապետարանի 12.02.2016թ. թիվ 01/61-2103 գրությունները և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

1. ՀՀ Կոփայքի մարզի Ջրվեժի գյուղապետարանի կողմից կազմակերպված «ԿՄՋԳ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Սասունասար» ՍՊԸ-ն **23.06.2015թ.** մասնակցության հայտ է ներկայացրել Զրվեժի գյուղապետարանի կողմից Զրվեժի գյուղապետարանի կարիքների համար կազմակերպված «ԿՄՋԳ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին:

Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.07.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սասունասար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա (23.06.2015թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 225 414 ՀՀ դրամի չափով:**

Կենտրոնը գտնում է, որ «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից Զրվեժի գյուղապետարանի կարիքների համար կազմակերպված «ԿՄՋԳ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 23.06.2015թ. հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՊԸԾՁԲ-16/18» ծածկագրով պարզեցված ընթացակարգ.

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը

պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը չտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

Ընթացակարգ 2-ի հրավերով սահմանվել է, որ Մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ մասնակիցը հայտնում է, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

Ընդ որում՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ **ծառերի էրի ծառայությունների մատուցումը:**

«Սասունասար» ՍՊԸ-ն ընթացակարգի մասնակցության 26.01.2016թ. հայտի N 3.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռուֆինանց 1/1 և Դրոյի 4 շենքերի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների ցանկապատման, թիվ 149 մանկապարտեզի ընթացիկ նորոգման և հենապատերի սվաղման, ներկման աշխատանքներ, Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի 1-ին զանգվածի Գայի պողոտային հարող այգու տարածքում հուշարձանային համալիրի կառուցապատում, որի ընդհանուր արժեքը կազմել է 20 391 455.0 ՀՀ դրամ և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացրել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 26.01.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետով արձանագրել է անհամապատասխանություն «Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի և հրավերի

պահանջների նկատմամբ, նշելով, որ մասնակիցը հայտի հավելված 3.1-ով պետք է ներկայացնի հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է ծառերի էտի ծառայություններ, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է բակային տարածքների բարեկարգման, հուշարձանային համալիրի կառուապատման և այլ աշխատանքների կատարման մասին հայտարարություն:

Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, 26.01.2016թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրության 1.4 կետով մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով Ընկերությանը շտկել հայտում առկա անհամապատասխանությունները, որոնք սակայն Ընկերության կողմից չեն շտկվել:

Հիմք ընդունելով Ընկերության կողմից հայտում առկա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու հանգամանքը՝ Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Ընկերությունը իրականում էլեկտրոնային եղանակով չի ստացել գնահատող հանձնաժողովի համապատասխան ծանուցումը, ապա հայտնում ենք, որ Armeps էլեկտրոնային համակարգի համապատասխան քաղվածքի համաձայն՝ հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու մասին ծանուցումը Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է 26.01.2016թ. ժամը 18:17-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, **եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է** պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում սրանձնած պարտավորություն**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հեղազա մասնակցության դադարեցմանը**:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում մեկ անգամ է խախտել գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, գտնում ենք, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետով նախատեսված հիմքով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Սասունասար» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ,** քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնը արձանագրում է, որ «Սասունասար» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը **23.06.2015թ.** մասնակցելով «ԿՄՋԳ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և

26.01.2016թ. կրկին հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՊԸԾՁԲ-16/18» ծածկագրով պարզեցված ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, **եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ** կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 18.02.2016թ. թիվ 1/73-3/5818-16 և 24.02.2016թ. թիվ 1/73-1/6745-16 գրություններով ներկայացված «Սասունասար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01516603) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-75/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան